



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

N 58

ք. Արտաշատ

<<28>> <<03>> 2013թ.

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
 ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 13-րդ կետի 1-ին ենթակետի բ/ պարբերության պահանջներով՝

1. ՀՀ պետական բյուջեի 2013թ. միջոցների հաշվին Արարատի մարզի Ոսկետալի գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցի և Նոյակերտ գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման աշխատանքների /նախագծա-հետազոտական, հեղինակային հսկողության, տեխնիկական հսկողության և շինարարության/ գնումների գործընթացի պատասխանատու ստորաբաժանում սահմանել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանին Հայաստանի Հանրապետության 2013թ. փետրվարի 7-ի <<Հայաստանի Հանրապետության 2013թ. պետական բյուջեից /Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից, առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծմանը/ գումար հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ-ի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն, 2012թ-ի մայիսի 24-ի թիվ 711-Ն և 2012թ-ի հոկտեմբերի 4-ի թիվ 1392-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> թիվ 130-Ն որոշումով հաստատված գումարով՝ նախագծա-հետազոտական, հեղինակային հսկողություն, տեխնիկական հսկողության և շինարարական աշխատանքների, գնման գործընթացների պատասխանատու ստորաբաժանում սահմանել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ